13
ԴԵԿՏԵՄԲԵՐԻ
2020

Luys Լույս®

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ ԿԱ. ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 2020Թ. ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԼՈՒԾՈՒՄ ԿԱ.
ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ 2020Թ. ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

Տիգրան Թորոսյան
Քաղաքական գիտությունների դոկտոր,
Հեռանկարային հետազոտությունների
և նախաձեռնությունների կենտրոն

Ս. թ. հուլիսին «Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի փուլերը, իրավիճակն ու հեռանկարները» հոդվածը հրապարակելիս անգամ ամենավառ երևակայության դեպքում հնարավոր չէր կանխատեսել, որ չորս ամսվա ընթացքում, գործող իշխանության աղետալի գործունեության հետևանքով, կիրականանան հոդվածում մատնանշված բոլոր մտավախությունները, վտանգների ու սպառնալիքների հետևանքները՝ իրենց ամենածանր և շոկային դրսևորումներով: Պատահական չէ, որ իրավիճակը գնահատող տեսակետները շատ հաճախ հուսահատական են ու ջլատող՝ «Արցախը կորցրել ենք», «Եռակողմ հայտարարությունն անձեռնմխելի է», «Հայաստանն ենք կորցնում» և այլն: Ոմանք էլ փորձում են սրբագրել անցյալը՝ խնդիրը տեղափոխելով «նախկիններ» հարթություն: Մինչդեռ անհրաժեշտ է սթափ գնահատական կատարվածին ու դրա հետևանքներին, ծայրահեղ կենտրոնացում, ուժերի ու կարողությունների աննախադեպ համախմբում և ելքի կամք, քանի որ պատերազմի աղետալի հետևանքները կարելի է շտկել ներքաղաքական իրավիճակի կտրուկ փոփոխությամբ ու դիվանագիտական հարթությունում ամենօրյա ակտիվ, բարդ ու բարձրակարգ որակներ պահանջող աշխատանքի շնորհիվ: Հետևաբար, անհրաժեշտ է այն նախադրյալների առանձնացումը, որոնք հնարավոր դարձրեցին պատերազմն ու դրա հետևանքները, ինչպես նաև այն հնարավորությունների բացահայտումը, որոնք կարող են հիմք դառնալ միանգամայն այլ բնույթի վերջնարդյունքներ արձանագրելու համար:

1. ՄԻՆՉՊԱՏԵՐԱԶՄՅԱՆ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2018թ. Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխությունից մեկ տարի անց (սովորաբար առավելագույնն այդքան ժամանակ են միջնորդները տրամադրում նոր իշխանություններին՝ իրավիճակին ծանոթանալու, դիրքորոշումները ճշգրտելու և բանակցային գործընթացում ներգրավվելու համար) համանախագահները սկսեցին հնչեցնել նախազգուշական հայտարարություններ: Դրանք թեև ուղիղ մատնանշումներ չունեին, սակայն առաջին հերթին ուղղված էին Հայաստանի իշխանություններին, քանի որ, ինչպես ցույց է տրվում վերոհիշյալ հոդվածում, նրանք մերժում էին կարգավորման ողջ նախընթաց ճանապարհը՝ ամեն ինչ զրոական կետից սկսելու նպատակադրումով՝ անհիմն ու վտագավոր «գաղափարների» ու «սկզբունքների» հիման վրա:

2019 թվականին Մինսկի խմբի համանախագահները, «հերքելու համար Մինսկի խմբի գործընթացի բնույթի վերաբերյալ հրապարակային հակասական հայտարարությունները», համատեղ հայտարարությամբ ևս մեկ անգամ հրապարակել էին կարգավորման սկզբունքներն ու տարրերը. «Արդար և կայուն կարգավորումը պետք է հիմնված լինի Հելսինկյան եզրափակիչ ակտի հիմնական սկզբունքների վրա, այդ թվում, մասնավորապես, ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման, տարածքային ամբողջականության, ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքները: Այն նաև պետք է ընդգրկի 2009-2012 թվականներին համանախագահ երկրների նախագահների առաջարկած տարրերը՝ Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքների վերադարձ Ադրբեջանին, Լեռնային Ղարաբաղի ժամանակավոր կարգավիճակ, որը կապահովի անվտանգության և ինքնավարության երաշխիքներ, Հայաստանը Լեռնային Ղարաբաղին միացնող միջանցք, Լեռնային Ղարաբաղի ապագա կարգավիճակի որոշում իրավականորեն պարտադիր կամարտահայտության միջոցով, բոլոր ներքին տեղահանված անձանց և փախստականների՝ իրենց նախկին բնակության վայրերը վերադարձի իրավունք և անվտանգության միջազգային երաշխիքներ, որոնք կներառեն խաղաղարար գործողություն: Համանախագահներն ընդգծում են, որ այս սկզբունքներն ու տարրերը պետք է լինեն հակամարտության կարգավորման ցանկացած արդար և կայուն կարգավորման հիմքը և պետք է դիտարկվեն որպես մեկ ամբողջություն: Ցանկացած փորձ՝ այս կամ այն սկզբունքները կամ տարրերը մյուսներից վեր դասելու, անհնար կդարձնի հավասարակշռված լուծման ապահովումը»:

2020թ. ապրիլին Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ս. Լավրովի հայտարարությունից պարզ դարձավ, որ համանախագահների վերը նշված հայտարարությունից հետո եղել է ավելի կոշտ նախազգուշացում՝ 2019թ. ապրիլին Ռուսաստանի, Հայաստանի և Ադրբեջանի արտգործնախարարների և Մինսկի խմբի համանախագահների հանդիպման ժամանակ «Մոսկվայում տարածվել են նախագծեր, որոնք ակտիվորեն քննարկվում են և ենթադրում են շարժում դեպի կարգավորում փուլային մոտեցման հիման վրա՝ նախատեսելով առաջին փուլում առավել արդիական խնդիրների լուծում՝ Լեռնային Ղարաբաղի հարակից մի շարք շրջանների ազատում ու տրանսպորտային, տնտեսական և այլ հաղորդակցությունների բացում»: Մինսկի խմբի շրջանակներում նախկինում բանակցային գործընթացի միայն մեկ բացահայտում էր արվել, երբ 2010թ. Լ՛Աքիլայում համանախագահող երկրների ղեկավարները ներկայացրել էին բանակցությունների սկզբունքներն ու տարրերը: Հետևաբար պետք էր ենթադրել, որ Ռուսաստանը ստեղծված իրավիճակը համարում է աննախադեպ և դիմում է բացառիկ քայլի՝ բանակցային գործընթացի որոշ տարրերի բացահայտման: Իրադարձությունների հետագա զարգացումը ցույց տվեց, որ դա չափազանց լուրջ զգուշացում էր Հայաստանի իշխանությանը: Հայաստանի արտգործնախարարի արձագանքը՝ «2014 թվականին առաջարկված տարբերակը չի գտնվում բանակցությունների սեղանին», ցույց տվեց, որ տեղի է ունենում բանակցային գործընթացի նկատմամբ Հայաստանի վերաբերմունքի աննախադեպ փոփոխություն: Եթե 2018թ. իշխանափոխությունից հետո ձևավորված իշխանությունը փորձում էր Լեռնային Ղարաբաղի կարգավորման գործընթացը ներքաղաքական կյանքում օգտագործել միայն անհիմն ու վտանգավոր հայտարարություններով (հակամարտության լուծումը պետք է բավարարի Ադրբեջանի, Հայաստանի, Լեռնային Ղարաբաղի ժողովուրդներին, Հայաստանի իշխանությունները գործընթացը սկսում են զրոական կետից, առաջադրվում են Մյունխենյան սկզբունքները և այլն), ապա 2020 թվականից այլևս նման մանիպուլյացիաների մեջ ներքաշում էին համանախագահներին: Արտաքին գործերի նախարարի այդ արտահայտությունն ուներ երկակի նշանակություն՝ հայ հանրության մեջ տպավորություն էր ստեղծում, որ իբր ժխտվում է Լավրովի նշած փուլային լուծման տարբերակի առկայությունը բանակցային գործընթացում, մինչդեռ Լավրովին էլ կարելի էր ասել, որ խոսք է եղել «2014թ. տարբերակի», այլ ոչ թե 2019թ. «տարածված նախագծերի» մասին: Այդ պարզունակ աճպարարությունը խիստ վտանգավոր և անպատասխանատու վերաբերմունք էր ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի երեք երկրների, առաջին հերթին՝ Ռուսաստանի նկատմամբ:

Աճպարարությունները, կեղծիքներն ու փաստերի նենգափոխումները հասան իրենց գագաթնակետին՝ ավելի ու ավելի խորացնելով գործընկերների անվստահությունն ու թշնամու համոզվածությունը, որ վերջապես պատեհ առիթ է ստեղծվել վաղեմի երազանքը իրականացնելու համար:

2. ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ՁԵՎԱՎՈՐՎԱԾ ԻՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Այս պատերազմի ընթացքում արձանագրվեց հայաստանյան դիվանագիտության բացարձակ ձախողում. արտաքին աշխարհի հետ միակ «գործակցությունը» օտարերկրյա լրատվամիջոցներում բարձրաստիճան պաշտոնյաների հարցազրույցներն էին, որոնք ամենամեծ ցանկության դեպքում իսկ հնարավոր չէ համարել դիվանագիտական գործունեության արդյունք կամ գործիք: Չի եղել որևէ քաղաքական միջազգային կազմակերպության համարժեք արձագանք ո՛չ ռազմական ագրեսիային, ո՛չ դրան Թուրքիայի մասնակցությանը, ո՛չ արգելված զինատեսակների կիրառմանը: Կատարյալ ձախողման գագաթնակետն էր արտգործնախարարության հերքումը երկրի վարչապետի հայտարարությանը առ այն, որ Շուշին նախկինում էլ եղել է բանակցային գործընթացի քննարկման առարկա: Փաստորեն, երկրի ղեկավարը կա՛մ տեղյակ չէր բանակցային գործընթացից, կա՛մ նենգափոխում էր հարցը: Համարժեք արձագանքներ չէին ունենում անգամ պատերազմի ընթացքում վերահաս աղետի վերաբերյալ զգուշացումները: Հոկտեմբերի 14-ին տրված հարցազրույցում Ս. Լավրովը նշում է, որ եթե մինչ պատերազմը խոսք էր գնում աստիճանաբար հինգ, ապա ևս երկու շրջաններ ազատելու և դրանց սահմաններին խաղաղապահներ տեղադրելու մասին, ապա այդ ժամանակ արդեն խաղաղապահներ պետք է տեղադրվեին փաստացի շփման գծով: Ակնհայտ է, որ թեև օղակը նեղանում էր, այդ պնդումից երևում է, որ որոշ տեղերում արդեն բուն Լեռնային Ղարաբաղի տարածքների մասին էր խոսքը, սակայն այդ տարբերակին համաձայնելիս և՛ մարդկային, և՛ տարածքային կորուստները կլինեին շատ ավելի սակավ: Պատահական չէ, որ Ռուսաստանի նախագահ Վ. Պուտինը տարակուսում էր, թե ինչու Փաշինյանը չէր համաձայնում հրադադարի հաստատմանը շատ ավելի բարենպաստ պայմաններով:

Նոյեմբերի 9-ին հրապարակվեց Ռուսաստանի ու Ադրբեջանի նախագահների և Հայաստանի վարչապետի հայտարարությունը (հետագայում՝ Հայտարարություն)

Լեռնային Ղարաբաղի հակամարտության գոտում կրակի և բոլոր ռազմական գործողությունների դադարեցման մասին: Միացյալ Նահանգները, Ֆրանսիան, մի շարք այլ երկրներ, Եվրոպական միությունն ու այլ միջազգային կազմակերպություններ ողջունեցին կրակի դադարեցումը՝ համարելով, որ փրկվում է ամեն օր զոհվող հարյուրավոր զինվորականների ու խաղաղ բնակչության կյանքեր: Հակամարտության շփման գծի երկայնքով տեղակայվել են ռուս խաղաղապահներ և պահպանվում է հրադադարի ռեժիմը:

Թեև Հայտարարությունը թույլ է տվել հրադադար հաստատել, բայց միաժամանակ ստեղծվել է բարդ ու խիստ վտանգավոր իրավիճակ ինչպես Մինսկի խմբի շրջանակներում, այնպես էլ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում: Պատճառն ակնհայտ է՝ Հայտարարության 9 կետերից միայն 5-ն է վերաբերում հրադադարին, մյուս 4-ը առնչվում է տարածքային խնդիրների՝ բացառապես ի շահ Ադրբեջանի, դուրս թողնելով մի շարք առանցքային հարցեր, այդ թվում՝ նաև Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Հետևաբար, կարևոր նշանակություն ունի Հայտարարության այդ՝ 2-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ կետերի ազդեցությունը հետագա զարգացումների վրա՝ խնդրի լիարժեք ու վերջնական կարգավորման տեսակետից, և պահանջվում է դրանց վերլուծություն՝ փաստաթղթի իրավական ուժն ու քաղաքական նշանակությունը բացահայտելու նպատակով: Ընդ որում, պետք է հաշվի առնել, որ այդ կետերից երկուսը՝ 2-րդն ու 6-րդը, արդեն իրականացված են և Հայտարարությունը չեղյալ համարելու վերաբերյալ քննարկումներն ավելորդ են: Առավել ևս, որ «Մադրիդյան սկզբունքների» տարրերում այդ տարածքների և 7-րդ կետում նշված փախստականների վերադարձի վերաբերյալ համապատասխան արձանագրում կա:

3. ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՒԺՆ ՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայտարարության իրավական ուժն ու քաղաքական նշանակությունը պայմանավորված են Հայտարարության առարկայով, կարգավիճակով ու պատերազմի բնույթով:

1. *Հայտարարության առարկան:* Հայտարարության կարգավիճակը կարող է դիտարկվել երկու տեսակետից՝ որպես հրադադարի հաստատման և/կամ խնդրի կարգավորման փաստաթուղթ: Առաջին դեպքին համապատասխանում են 1-ին, 3-5-րդ, 8-րդ կետերը, մինչդեռ 2, 6, 7-րդ և 9-րդ կետերը վերաբերում են

հակամարտության տարածքներին և փախստականների վերադարձին, ինչն առնչվում է Մինսկի խմբի համանախագահների ներկայացրած կարգավորման փաստաթղթի 6 տարրերից երկուսին: Հետևաբար, այդ կետերը պետք է քննարկվեն հակամարտության կարգավորման համատեքստում:

Հանրահայտ է, որ ավելի քան 26 տարի բոլոր հեղինակավոր միջազգային կազմակերպությունները՝ ՄԱԿ, ԵԱՀԿ, ԵՄ, ԵԽ, և բոլոր ազդեցիկ պետություններն այս հակամարտության կարգավորման վերաբերյալ բազմիցս հայտարարել են, որ՝

- դա իրականացնելու են Մինսկի խմբի համանախագահները,
- հակամարտությունը ռազմական լուծում չունի,
- այն պետք է կարգավորվի միջազգային իրավունքի հիմնական սկզբունքներից երեքի՝ ժողովուրդների ինքնորոշման իրավունքի, տարածքային ամբողջականության և ուժի ու ուժի սպառնալիքի չկիրառման հիման վրա,
- հակամարտության կողմերը երեքն են՝ Հայաստանը, Ադրբեջանը և Լեռնային Ղարաբաղը:

Ակնհայտ է, որ Հայտարարությունը չի համապատասխանում միջնորդների եռակողմ ձևաչափին, միջազգային իրավունքի սկզբունքներին՝ խնդրի ռազմական լուծման բացառմանը, հակամարտության եռակողմ ձևաչափին, ինչպես նաև միջազգային հարաբերություններում գործող պրակտիկային և ԼՂ հակամարտության կարգավորման գործընթացի սկզբունքներին ու տրամաբանությանը, հետևաբար չի կարող համարվել կարգավորման փաստաթուղթ: Դրա վկայությունն է նաև այն հանգամանքը, որ Հայտարարությունը չի ներառում խնդրի կարգավորմանը վերաբերող այն բոլոր հարցերը, մասնավորապես՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի վերաբերյալ, որոնց շրջանակը սահմանված է բանակցային փաստաթղթով: Ակնհայտ է, որ Հայտարարությունը ստորագրած կողմերը, եթե անգամ ցանկանային, չէին կարող չեղյալ համարել գոյություն ունեցող կարգավորման գործընթացը՝ առանց կողմերի լիարժեք ձևաչափի պահպանման և ԵԱՀԿ համաձայնության, որի անդամ են: Դա նշանակում է, որ պետք է՝

- վերականգնվեն բանակցությունները Մինսկի խմբի շրջանակներում,
- արձանագրվի, որ Ադրբեջանն ու Թուրքիան, ռազմական ագրեսիա իրականացվելով, խախտել են ոչ միայն միջազգային իրավունքի հիմնարար նորմերը, այլև Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման սկզբունքներից մեկը՝ ուժի և ուժի սպառնալիքի չկիրառման վերաբերյալ,

- Հայտարարության 2, 6 և 7-րդ կետերում ձևակերպված դրույթները և դրանց իրացման հետևանքով առաջացած իրողությունները համապատասխանեցվեն միջազգային իրավունքի նորմերին, քննարկվեն և լրամշակվեն մյուս տարրերին համապատասխանող լուծումները,
- Լեռնային Ղարաբաղի ներկայացուցիչը մասնակցի բանակցություններին, քանի որ վերջինս, որպես ինքնորոշվող կողմ, միջազգային իրավունքի սուբյեկտ է:

Ինչ վերաբերում է Հայտարարության 9-րդ կետին, ապա այն առնչվում է Հայաստանի Հանրապետության տարածքին, որը երբեք Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման գործընթացի քննարկման առարկա չի եղել և դրա հետ կապված կարգավորման գործընթացում որևէ խնդիր չի ձևակերպվել ու քննարկվել: Հայաստանի Հանրապետության վարչապետը երկրի Սահմանադրությամբ սահմանված որևէ լիազորություն չունի տարածքներին առնչվող միանձնյա որոշումներ ընդունելու վերաբերյալ: Այդ հարցերը պետք է լուծվեն միայն միջազգային պայմանագրերով, որոնց համապատասխանությունը երկրի Սահմանադրությանը որոշում է սահմանադրական դատարանը, իսկ վավերացումը իրականացնում է խորհրդարանը: Հետևաբար, Հայտարարության 9-րդ կետում արձանագրվածը չի կարող իրացվել այդ փաստաթղթի հիման վրա:

2. <u>Հայտարարության կարգավիճակը:</u>

Հարկ է հաշվի առնել նաև, որ Հայտարարությունը միջազգային պայմանագիր չէ, այլ երեք երկրների ղեկավարների ստորագրած քաղաքական փաստաթուղթ: Սակայն 2, 6, 7-րդ և 9-րդ կետերն առնչվում են տարածքային խնդիրների, որոնք հայտարարության միջոցով չեն կարող կարգավորվել: Հայտարարությունը ստորագրած երեք երկրների ղեկավարների հայտարարությունները կարող են ունենալ միայն քաղաքական նշանակություն, այլ ոչ իրավական ուժ, քանի որ այդ երկրների Սահմանադրություններն իրենց ղեկավարներին նման լիազորությամբ չեն օժտել: Այդ հարցերը միջազգային պայմանագրերի կարգավորման առարկա են՝ Սահմանադրությամբ սահմանված համապատասխան արարողակարգային լուծումներով:

Այսպիսով, ակնհայտ է, որ օրինական ուժ ունեն միայն Հայտարարության 1-ին, 3-5-րդ և 8-րդ կետերը: 2-րդ և 6-րդ կետերը իրավական ուժ չունեն, քանի որ ստորագրող կողմերը գերազանցել են իրենց լիազորությունները: Սակայն պետք է հաշվի առնել, որ այդ կետերն արդեն կատարվել են, և դրանց վիճարկումն անիմաստ

է՝ Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքներն այլևս դիտարկվելու են Ադրբեջանի տարածքային ամբողջականության տեսակետից: Սակայն ակնհայտ է, որ կա շատ կարևոր աշխատանք՝ կարգավորման տարրերի հետ կապված, քանի որ նույն սկզբունքով պետք է վերադարձվեն Ադրբեջանի վերահսկողության տակ գտնվող Լեռնային Ղարաբաղի տարածքները: Հայտարարության 7-րդ՝ փախստականներին առնչվող կետի դրույթները նույնպես պետք է լրամշակվեն կարգավորման տարրերի շրջանակում, քանի որ դրա իրացման համար պահանջվում են էական ճշգրտումներ: Իսկ 9-րդ կետը, ինչպես պարզ դարձավ վերևում, Հայտարարության հիման վրա իրացնելն անհնարին է: Ուրեմն Հայտարարությունը չեղյալ համարելու անհրաժեշտություն չկա, և պետք է կենտրոնանալ կարգավորման տարրերի լրամշակման վրա:

Քանի որ Հայտարարությունն առնչվում է ռազմական գործողություններին, ապա այն կարող է դիտարկվել որպես կապիտուլյացիայի ակտ: Այդ տեսակետից առանցքային նշանակություն ունի պատերազմի բնույթը:

3. <u>Պատերազմի բնույթը</u>

Այս ռազմական ագրեսիան երրորդն էր 1991թ. միջազգային իրավունքում բարձրագույն իրավական նորմի կարգավիճակ ունեցող ժողովուրդների ինքնորոշման իրավունքը կիրառած, սակայն դեռևս չճանաչված Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ: Առաջինը տեղի է ունեցել 1992-94 թվականներին, երկրորդը՝ 2016թ. և տևել է 4 օր, երրորդը սկսվեց 2020թ. սեպտեմբերի 27-ին և տևեց 44 օր: Վերջինն աննախադեպ էր ոչ միայն ռազմական գործողությունների ծավալմամբ ԼՂ-ի և Ադրբեջանի զինված ուժերի շփման գծի ողջ երկայնքով, այլև Բաքվի կիրառած զինատեսակներով, ինչպես նաև Թուրքիայի ուղղակի մասնակցությամբ:

Տեսնելով, որ չի կարողանում հաղթահարել հայկական զորքերի պաշտպանությունը, Ադրբեջանը սկսեց կիրառել արգելված զինատեսակներ, ինչպես արձանագրում են հեղինակավոր պարբերականներ և միջազգային կազմակերպություններ: Ինչպես շատ այլ լրատվամիջոցներ, The Telegraph-ը հայտնել է, որ Ադրբեջանը միջազգայնորեն արգելված կասետային ռումբերի կիրառմամբ հրթիռակոծում էր քաղաքացիական թիրախներ՝ բնակելի շենքեր, հիվանդանոցներ, մանկապարտեզներ, դպրոցներ ու եկեղեցիներ: Ռազմական գործողությունների դադարեցման Հայտարարությանն արձագանքելով՝ Եվրամիությունը հիշեցրել է, որ «վճռականորեն մերժում է ուժի կիրառումը, մասնավորապես կասետային ռումբերի և

հրածին զինամթերքի օգտագործումը որպես վեճերի լուծման միջոց: ...Բոլոր ռազմական հանցագործությունները, որոնք հնարավոր է տեղի են ունեցել, պետք է քննվեն»: Բազմաթիվ փաստեր են ներկայացվել նաև այդ պատերազմին Թուրքիայի ուղղակիորեն մասնակցության մասին՝ Ադրբեջանին տրամադրելով զինամթերք, հատուկ ջոկատայիններ, ռազմական գործողությունները կառավարող բարձրաստիճան զինվորականներ, ռազմական տեխնիկա, ԱԹՍ-ներ, Ֆ-16-եր, որոնք Ադրբեջանում էին թողնվել հուլիս-օգոստոսին անցկացված զորավարժություններից հետո: Թուրքիայի մասնակցության առանձնահատուկ դրսևորում է Սիրիայից և Լիբիայից վարձկան ահաբեկիչների տեղափոխումը, որին անդրադարձել են ինչպես The Wall Street Journal-ը, Washington Post-ը, The National Interest-ը, ռուսական Коммерсантъ-ը, ֆրանսիական Le Figaro-ն և շատ այլ հեղինակավոր պարբերականներ, այնպես էլ Ֆրանսիայի, Ռուսաստանի նախագահները, Միացյալ Նահանգների պետքարտուղարն ու այդ երկրների համապատասխան կառույցների ղեկավարները:

Այսպիսով, ակնհայտ է, որ ՄԱԿ-ի անդամ երկու պետությունների՝ Ադրբեջանի և Թուրքիայի կողմից տեղի է ունեցել ռազմական ագրեսիա Լեռնային Ղարաբաղի նկատմամբ՝ որպես պատասխան ինքնորոշման իրավունքի իրացմանը, ինչն ինքնին միջազգային իրավունքի կոպիտ ոտնահարում է: Ավելին, այդ ագրեսիայի ընթացքում տեղի են ունեցել ռազմական հանցագործություններ՝ արգելված զինատեսակների օգտագործում, քաղաքացիական օբյեկտների՝ հիվանդանոցների, դպրոցների, մանկապարտեզների, բնակելի շենքերի շարունակական ռմբահարումներ ու հրթիռակոծումներ: Սակայն միջազգային իրավունքի խախտումները դրանով չեն սահմանափակվում: Հրադադարի հաստատման Հայտարարությունը սահմանում է ապօրինի միակողմանի պարտավորություններ Հայաստանի համար: Այն օգտագործվել է ագրեսիայի արդյունքներն ամրագրելու և Հայաստանին ու Լեռնային Ղարաբաղին պարտադրելու դրանցից ավելի մեծ կորուստներ: Թեև Հայտարարության 1-ին կետով կողմերին պարտադրվում է «կանգնել զբաղեցրած դիրքերում», սակայն 2-րդ և 6-րդ կետերով Հայաստանին պարտադրում է Ադրբեջանին հանձնել զգալի տարածքներ, որոնք կապում են Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը: Մինչդեռ ԽՍՀՄ-ում գոյություն ունեցած Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի (ԼՂԻՄ) զգալի հատվածներ ոչ միայն դեռևս 1994 թվականից մնում են Ադրբեջանի զինված ուժերի վերահսկողության ներքո, այլև դրանց ավելանում են այս ագրեսիայի ընթացքում գրավված ԼՂԻՄ-ի Շուշի և Հադրութ քաղաքներն ու 50-ից ավելի գյուղեր, որոնց հայ բնակչությունը տեղահանվել է այս

հրադադարի հաստատումից հետո: Ս. Լավրովի պնդումները, որ Հայտարարությունը կազմվել է Մինսկի խմբի մշակած մոտեցումների հիման վրա, չի համապատասխանում իրականությանը, Հայտարարությունը կոպտորեն ոտնահարում է նաև այդ մոտեցումները:

Այդ Հայտարարության միակ սկզբունքը՝ տարածքների հետ կապված, հետևյալն է. Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը պետք է կատարեն Ադրբեջանի բոլոր պահանջները, ինչը համապատասխանում է միայն կապիտուլիացիային: Հետևաբար, այդ Հայտարարության դրույթների հիման վրա՝ առանց դրանք լրամշակելու, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորումը կնշանակի խրախուսել ռազմական ագրեսիան, ռազմական հանցագործությունները և միջազգային իրավունքի սկզբունքների կոպիտ ոտնահարումը: Ցավալի է, որ դա կատարվում է ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներից մեկի՝ Ռուսաստանի մասնակցությամբ և ևս երկուսի՝ Միացյալ Նահանգների ու Ֆրանսիայի լուռ համաձայնությամբ, որոնք, որպես Մինսկի խմբի համանախագահներ, պարտավոր են ապահովել խնդրի կարգավորումը միջազգային իրավունքի շրջանակներում: Ֆրանսիայի համար արդարացում չի կարող լինել նոյեմբերի 26-ին Սենատի ընդունած բանաձևը՝ Լեռնային Ղարաբաղի անկախության ճանաչման վերաբերյալ կառավարությանն արված առաջարկի մասին: Դրան անմիջապես հետևած Ֆրանսիայի արտաքին գործերի նախարարության հայտարարությունը, որ ճանաչումը ոչ ոքի, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղին, օգտակար չի լինի, չափից շատ է հիշեցնում տասնամյակներ շարունակվող ամերիկյան քաղաքական վերնախավի ցինիկ խաղը՝ կապված Հայոց ցեղասպանության ճանաչման հետ: Թեև Հայաստանի իշխանությունների հանցավոր անգործության և գործընկեր պետությունների նկատմամբ անպատասխանատու վերաբերմունքի պայմաններում ավելորդ է ակնկալել, որ հայկական հիմնախնդիրների վերաբերյալ որևէ պետություն կանի ավելին:

Կարելի է չկասկածել, որ ագրեսիայի արդյունքների ամրագրման հիման վրա խնդրի «կարգավորումը» և դրա առավել հավանական հետևանքները կդնեն հաջորդ պատերազմի կամ Լեռնային Ղարաբաղի հայության ցեղասպանության հիմքերը:

Մինչդեռ համապարփակ և կայուն լուծում, ինչպիսին եղել է Կոսովոյի, Արևելյան Թիմորի, Հարավային Սուդանի ու մի շարք այլ դեպքերում, այսօր էլ կա և այն ակնհայտ է: Էթնոքաղաքական հակամարտությունները լուծվել են կա՛մ միջազգային հանրության պարտադրանքով՝ միջազգային իրավունքի նորմերին

խստագույն համապատասխանությամբ, կա՛մ ինքնորոշվող ժողովրդի ցեղասպանությամբ: Երկրորդ տարբերակից խուսափելու համար խնդրի կարգավորումը պետք է վերադարձնել Մինսկի խմբի համանախագահների ձևաչափին, որոնք պարտավոր են, որպես ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի մշտական անդամներ, չօգտագործել Լեռնային Ղարաբաղը Հարավային Կովկասում ծավալված աշխարհաքաղաքական մրցակցության մեջ և անհապաղ համապարփակ ու կայուն լուծում առաջարկել և այն իրագործել: Միջազգային իրավունքի վերաբերյալ բավարար գիտելիքներ ունեցող յուրաքանչյուրի համար ակնհայտ է, որ այդ դեպքում անհրաժեշտ կլինի ճանաչել Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի իրացումը՝ անկախությունը, Լեռնային Ղարաբաղին վերադարձնել Ադրբեջանի օկուպացրած տարածքները:

4. ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Նոյեմբերի 9-ի Հայտարարության հրապարակումից հետո ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահներ Միացյալ Նահանգներն ու Ֆրանսիան, ինչպես նաև Եվրամիությունը հայտարարել են, որ ռազմական գործողությունների դադարեցումը բազմամյա հակամարտության կարգավորման ուղղությամբ արված միայն առաջին քայլն է: Համապարփակ և կայուն կարգավորում ապահովելու, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակի որոշման նպատակով նրանք կոչ են անում վերսկսել ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների ձևաչափով բանակցությունները Հելսինկյան եզրափակիչ ակտի երեք սկզբունքների հիման վրա: Այդ դիրքորոշումները ներկայացնելու նպատակով նոյեմբերի 18-ին Մոսկվայում տեղի ունեցավ Մինսկի խմբի համանախագահների հանդիպումը Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովի հետ: Քանի որ հանդիպումից հետո որևէ համատեղ հայտարարություն չտարածվեց, կարելի էր ենթադրել, որ կա՛մ առաջացել են տարաձայնություններ Ռուսաստանի և մյուս համանախագահող երկրների միջև հակամարտության ամբողջական կարգավորման վերաբերյալ, կա՛մ համաձայնության են եկել դրան անդրադառնալ հրադադարի ռեժիմի ամրապնդումից հետո: Ավելի ուշ Ս. Լավրովը հայտարարեց, որ որոշ երկրներ դեմ են Հայտարարությանը, որի այլընտրանքը պատերազմի վերսկսումն է: Նա պնդել է նաև, որ Հայաստանի 17 քաղաքական ուժեր, որոնք պահանջում են վարչապետ Ն. Փաշինյանի հրաժարականը, պաշտպանում են Հայտարարությունը, ինչը բացարձակապես չի համապատասխանում իրականությանը: Այն մեծ հուզումներ է

առաջացրել երկրում, 17 ընդդիմադիր կուսակցություններ սկսել են անցկացնել բազմահազարանոց հանրահավաքներ, որոնց ընթացքում բազմիցս հայտարարել են, որ բարձր են գնահատում Ռուսաստանի ջանքերը հրադադարի հաստատման ուղղությամբ, ողջունում են ռուս խաղաղապահների մուտքը, սակայն վարչապետի ստորագրած Հայտարարությունը համարում են կապիտուլյացիայի ակտ ու պահանջում են նրա հրաժարականը: Ինչպես երևում է, թեև Հայտարարությունը թույլ է տվել հրադադար հաստատել, միաժամանակ ստեղծել է բարդ ու խիստ վտանգավոր իրավիճակ ինչպես Մինսկի խմբի շրջանակներում, այնպես էլ Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում: Պատճառն ակնհայտ է՝ Հայտարարության 9 կետերից միայն 5-ն է վերաբերում հրադադարին, մյուս 4-ը առնչվում է խնդրի կարգավորմանը՝ բացառապես ի շահ Ադրբեջանի, դուրս թողնելով մի շարք առանցքային հարցեր, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղի կարգավիճակը: Բացառիկ նշանակություն ունի Հայտարարության այդ՝ 2-րդ, 6-րդ, 7-րդ և 9-րդ կետերի ազդեցությունը հետագա զարգացումների վրա՝ խնդրի լիարժեք ու վերջնական կարգավորման տեսակետից: Հետևաբար, կարևոր է այդ կետերը դիտարկել ոչ թե որպես պատերազմի արդյունք, այլ կարգավորման բաղադրիչներ՝ միջազգային իրավունքի շրջանակներում: Այդ առումով չափազանց կարևոր է, որ թեև նոյեմբերի 18-ին Մոսկվայում Ս. Լավրովի և Մինսկի խմբի համանախագահների հանդիպումը չէր ավարտվել հայտարարության ընդունմամբ կարգավորման գործընթացի վերաբերյալ, սակայն դեկտեմբերի 3-ին համանախագահող երկրների պատվիրակությունների ղեկավարների հանդիպումը Տիրանայում հնարավորություն ստեղծեց համատեղ հայտարարության համար, որը ստեղծված իրավիճակում ստացել է բացառիկ կարևորություն Լեռնային Ղարաբաղի կարգավորման հեռանկարների տեսանկյունից: Ռուսաստանի արտգործնախարար Ս. Լավրովը, ԱՄՆ պետքարտուղարի տեղակալ Ս. Բիգունը և Ֆրանսիայի արտաքին գործերի և Եվրոպայի նախարար Ժ.-Ի. լը Դրիանը ողջունել են ռազմական գործողությունների դադարեցումը Լեռնային Ղարաբաղի հակամարտության շրջանում՝ նոյեմբերի 9-ի հայտարարությանը համապատասխան: «Համանախագահ երկրները կոչ են անում Հայաստանին և Ադրբեջանին օգտագործել կրակի ներկայիս դադարեցումը համանախագահների հովանու ներքո ամուր և կայուն խաղաղ համաձայնության բանակցությունների համար: Նրանք կրկին հաստատում են իրենց հետևողական և միասնական դիրքորոշումը՝ հօգուտ հակամարտության էության բոլոր մնացած հիմնական հարցերի վերաբերյալ բանակցային, համընդգրկուն և կայուն կարգավորման՝ հիմնական սկզբունքների ու տարրերի համաձայն, որոնք լավ հայտնի են ինչպես Հայաստանին, այնպես էլ Ադրբեջանին»: Կարևոր է նաև Մինսկի խմբի համանախագահող երկրների կոչը Հայաստանին և Ադրբեջանին՝ ամբողջ

ծավալով կատարելու նոյեմբերի 9-ի հայտարարությունից բխող պարտավորությունները Լեռնային Ղարաբաղի և հարակից շրջանների վերաբերյալ: Ուշադրության արժանի է այն հանգամանքը, որ Հայտարարության 9-րդ կետը այս ձևակերպման շրջանակներից դուրս է:

Համանախագահող երկրների ներկայացուցիչների դեկտեմբերի 3-ի համատեղ հայտարարությունը կարգավորման հեռանկարների տեսակետից կարևոր է մի շարք առումներով: Այն վերահաստատում է Մինսկի խմբի համանախագահների միասնական մոտեցումը մինչ պատերազմը գոյություն ունեցած սկզբունքների և տարրերի շրջանակում խնդրի կարգավորման վերաբերյալ: Դա նշանակում է, որ լուրջ հիմքեր են ստեղծվում պատերազմի արդյունքները ոչ թե որպես կապիտուլյացիայի հետևանք ամրագրելու, այլ դրանք սրբագրելու «Մադրիդյան սկզբունքներում» ամրագրված սկզբունքների և տարրերի շրջանակում: Այդ հնարավորությունը կարող էր վերանալ, եթե համանախագահ երկրների տարաձայնությունները չհաղթահարվեին և միջնորդական ձևաչափը փլուզվեր: Քանի որ հրադադարի հաստատումից հետո անցած մեկ ամսվա ընթացքում Ռուսաստանը ստացել է հնարավոր առավելագույնը որպես միջնորդ՝ հակամարտության գոտում տեղադրվել են խաղաղապահներ և հրադադարի պահպանումը ստացել է լուրջ հիմքեր, Ռուսաստանի համար կարգավորման գործընթացի վերադարձը Մինսկի խմբի համանախագահների շրջանակ միանգամայն ցանկալի տարբերակ է: Առավել ևս, որ Հայտարարության 4-րդ կետի համաձայն խաղաղապահների առաքելությունը կողմերից մեկի /առկա իրողությունների և հնարավոր զարգացումների պայմաններում՝ Ադրբեջանի/ պահանջով կդադարեցվի, ինչ Ռուսաստանի համար բոլորովին ցանկալի հեռանկար չէ: Հետևաբար Մոսկվայի շահերից կբխի նաև Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի ճանաչումն ու հետագայում անկախացումը, որոնք լավագույն հիմքը կլինեն ռուսական զինված ուժերի ներկայության անհրաժեշտությունը այնտեղ հիմնավորելու համար:

Քանի որ այդ դեպքում բանակցային փաստաթուղթը մնում է «Մադրիդյան սկզբունքները», որի հիմքում եղած Հելսինկյան եզրափակիչ ակտի 3 հիմնական սկզբունքները անփոփոխելի են, ապա այս ճանապարհով առաջ գնալու համար նախ պետք է հաշվի առնել, թե ինչ ճշգրտումներ պետք է անել այդ փաստաթղթի վերոհիշյալ տարրերում՝ որպես հետևանք պատերազմի արդյունքների: Ակնհայտ է, որ դա վերաբերում է տարածքների վերահսկողությանը, քանի որ պատերազմի արդյունքում կարգավորման դրույթների շրջանակում փոխվել է միայն այդ տարրին վերաբերող իրավիճակը. Ադրբեջանի վերահսկողության ներքո են անցել այսպես

կոչված «Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքները» և Լեռնային Ղարաբաղի սահմաններում գտնված մի շարք տարածքներ՝ Մարտունու, Մարտակերտի, Հադրութի, Ասկերանի շրջանների հատվածները, Շուշին և հարակից գյուղեր, Շահումյանի շրջանը: Փաստորեն, պատերազմի արդյունքում օրակարգից դուրս է եկել այս տարրի նախկին ձևակերպումը և անհրաժեշտ է նոր ձևակերպում: Հետևաբար, համանախագահների հռչակած սկզբունքների հիման վրա տարածքներին վերաբերող տարրը պետք է վերաշարադրվի հետևյալ բովանդակությամբ. «Լեռնային Ղարաբաղի վերահսկողությանը պետք է վերադարձվեն իր այն տարածքները, որոնք գտնվում են Ադրբեջանի վերահսկողության ներքո»:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նկատմամբ 2020թ. սեպտեմբերի 27-ին սկսված և նոյեմբերի 10-ին դադարեցված ադրբեջանաթուրքական ագրեսիայի հետևանքով «Լեռնային Ղարաբաղի հարակից տարածքները», Հադրութի, Ասկերանի, Մարտակերտի և Մարտունու շրջանների մի շարք գյուղեր, Հադրութ և Շուշի քաղաքները անցել են Ադրբեջանի վերահսկողության ներքո, ինչի արդյունքում ձևավորվել են նոր իրողություններ, որոնք պետք է հաշվի առնել խնդրի համապարփակ և կայուն կարգավորման համար: Ադրբեջանի վերահսկողության ներքո գտնվող Լեռնային Ղարաբաղի տարածքները պետք է վերադարձվեն:

2. Քանի որ Մինսկի խմբի համանախագահող երկրների ներկայացուցիչների դեկտեմբերի 3-ի համատեղ Հայտարարությամբ հակամարտության կարգավորումը պետք է իրականացվի Մինսկի խմբի շրջանակներում՝ համանախագահների ներկայացրած «Մադրիդյան սկզբունքներով» սահմանված հիմնական սկզբունքների ու տարրերի հիման վրա, հետևաբար անհրաժեշտ է լրամշակել այդ տարրերը, քանի որ դրանցից առաջինի՝ տարածքների վերաբերյալ տարրի հետ կապված ռազմական ագրեսիայի հետևանքով տեղի են ունեցել արմատական փոփոխություններ:

3. Քանի որ Լեռնային Ղարաբաղը ենթարկվել է ռազմական ագրեսիայի՝ ռազմական հանցագործությունների, արգելված զինատեսակների ու վարձկան ահաբեկիչների կիրառմամբ, այդ ամենը պետք է ստանա միջազգային ատյանների համապատասխան գնահատականն ու դատապարտումը: Այդ նպատակով անհրաժեշտ է ձևավորել բարձրակարգ մասնագետներից՝ օտարերկրացիների ներգրավմամբ, բաղկացած աշխատանքային խումբ, որը հնարավորինս կարճ

ժամանակահատվածում կնախապատրաստի ու պատկան միջազգային ատյաններ կներկայացնի համապատասխան հայտեր և հիմնավորումների փաթեթներ:

4. Ագրեսիայի իրականացումն Ադրբեջանի և Թուրքիայի կողմից ցեղասպանության միանգամայն իրական վտանգներ է ստեղծում Լեռնային Ղարաբաղի հայության համար: Դրանից խուսափելու միակ հնարավորությունը Լեռնային Ղարաբաղում ժամանակավոր միջազգային կառավարում մտցնելն է՝ ինքնորոշման իրավունքի իրացման ճանաչման նպատակադրումով:

5. Պետք է հնարավոր բոլոր միջոցներով, այդ թվում՝ ռուս խաղաղապահների ներգրավումով և Ռուսաստանի երաշխավորությամբ, ապահովել արցախահայության լիարժեք անվտանգությունն ու պաշտպանությունը, տեղահանված անձանց և փախստականների վերադարձն իրենց բնակության վայրեր:

6. Թեև իրավիճակը ծայրահեղ բարդ է, սակայն լուծում կա: Այդ լուծումը հսկայածավալ ու չափազանց բարձր պրոֆեսիոնալ որակներ պահանջող աշխատանք է ենթադրում, որի իրականացումը հնարավոր է միայն համապատասխան ոլորտների բարձրակարգ մասնագետների ներգրավմամբ, արտաքին գործերի նախարարության արագ վերակառուցմամբ և արտաքին հարաբերությունների լուրջ վերանայմամբ: Իրավիճակն ավելի է բարդացնում այն հանգամանքը, որ Լեռնային Ղարաբաղի խնդրի հետ կապված աղետաբեր զարգացումները համակարգային ճգնաժամի դրսևորումներն են միայն մեկ՝ առավել զգայուն ուղղությամբ: Արագ և համընդգրկուն լուծումների ուշանալու դեպքում այդ դրսևորումներն ակնհայտ են դառնալու բոլոր ուղղություններով:

7. Երկրի առջև ծառացած կենսական մարտահրավերների, բոլոր ուղղություններով՝ քաղաքական, տնտեսական, սոցիալական, բարոյահոգեբանական բարդ հիմնախնդիրների առկայությունը անհաղթահարելի են այն կառավարության համար, որի գործունեության արդյունքն են այդ մարտահրավերներն ու հիմնախնդիրների մեծամասնությունը: Հայաստանի Հանրապետությունն ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը համապետական և համազգային աղետի հասցրած կառավարությունը այլևս մեկ ողջամիտ անելիք ունի՝ ներկայացնել հրաժարական և հասարակությանը հնարավորություն տալ ձևավորելու նոր կառավարություն, որը օր առաջ ձեռնամուխ կլինի մարտահրավերների հաղթահարմանն ու հիմնախնդիրների լուծմանը: Այս հանգուցալուծումը անխուսափելի է, և դրա ուշացման յուրաքանչյուր օր բազմապատկում է գործող

կառավարության թույլ տված աններելի սխալներն ու խորացնում համակարգային ճգնաժամը:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*